

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«7» նոյեմբերի 2014թ.

N 731 -Ն

ք.Ստեփանակերտ

«ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ, ՍԵԼԵԿՑԻՈՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՐՄԵՐԻ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐՏԱԴՐՎԱԾ ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2014 թվականին արտադրված սերմացուի արժեքի սուբսիդավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ սուբսիդավորման գործընթացն ավարտվելուց հետո, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունն ներկայացնել հաշվետվություն՝ կատարված աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԳ

**«ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ, ՍԵԼԵԿՑԻՈՆ ԵՎ ԱՎՃՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ,
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՐՄԵՐԻ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ
ԱՐՏԱԴՐՎԱԾ ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) կողմից 2014 թվականին արտադրված սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) *սերմացուի սուբսիդավորում*՝ սերմացուի արժեքի մասնակի փոխհատուցում.

2) *սերմացուի արժեքի սուբսիդավորում միջոցառման մասնակից*՝ սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական մարմինները և այլ անձինք:

II. ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկողություն է իրականացնում սուբսիդավորման գործընթացի նկատմամբ:

4. Ընկերության կողմից 2014 թվականին արտադրված սերմացուն, որի համար սահմանվել է առաջին վերարտադրության 1 կիլոգրամ սերմացուի համար 270 ՀՀ դրամ, երկրորդ վերարտադրության 1 կիլոգրամ սերմացուի համար 260 ՀՀ դրամ, ուղղակի վաճառքի ձևով տրամադրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին:

5. Սույն կարգի 4-րդ կետում սահմանված արժեքից սերմացուի առաջին վերարտադրության 220 ՀՀ դրամը, երկրորդ վերարտադրության 210 ՀՀ դրամը վճարում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը:

6. Մասնակի սուբսիդավորման ենթակա է սույն կարգի 4-րդ կետում նշված սերմացուի արժեքի և 5-րդ կետում նշված արժեքի տարբերությունը՝ 50 ՀՀ դրամը:

7. Ընկերությունը, սերմացուն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին վաճառելուց հետո, նախարարությանը համապատասխան տեղեկություններ է ներկայացնում՝ սույն կարգի 6-րդ կետում նշված սուբսիդավորման գործընթացն ապահովելու նպատակով:

8. Նախարարությունը, սույն կարգի 7-րդ կետում նշված տեղեկությունների հիման վրա իրականացնում է սույն կարգի 6-րդ կետում նշված սուբսիդավորումը՝ 2015 թվականի պետական բյուջեում նախատեսվելիք համապատասխան միջոցներից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

